սատիկ մեծ յանդգնք է մանկավարժի համար), եթէ վարդանեանի մէջ քանի մի կոյժ մանկավարժական հմտութեան և ընդունակութեան լինէր, բաւ. այն է, որ նա ոչ մանկավարժի ընտրութիւն ունի և ոչ մանկավարժական հմտութիւն.

Մարդոց իմ դէմ գրգռելու և դէպի իր կողմը քաշելու համար, վարդանեանը սկսում է վարժապետներին տալ նոցա չունեցած յատկութիւնները, չափազանց գովաբանել և մինչև երկինք բարձրացնել, մինչ ինքն էլ շատ լաւ գիտէ, որ բոլոր սասնցի ծայրէ ի ծայր սուտ է նա. կամենում է, նոցա առջև խունկ ծխելով առ ժամ մի նոցա սիրտը չտնել, մինչև որ հարիւները հետս աւարտէ, բայց ես ասում եմ «իր�ր է աչքատանջդ».

Վարժապետներին այդ կերպով իմ վրա «ֆիրսաբումիչ» անելը միթէ չիտակութիւն էր վարդանեանի կողմանէ.

Փ. Վարդանեան, եթէ ես ինձմէն ասէի, գիտեմ, դու չէիր հաւատալ. ուրեմն սարկաւագ եմ քու ընկերների կարծիքը կրկնել քու առջև, որն նոքա ասել են և ասում են ամէն տեղ և ամէնի առջև, ի հարկէ բացի քեզանից. Մինը ասել է, որ դու հայերէն ոչինչ չը գիտես. միւսը ասել է, որ դու ռուսերէնի մէջ տգէտ ես, երրորդը ասել է, որ դու ոչ թուաբանութիւն գիտես, ոչ աշխարհագրութիւն և ոչ պատմութիւն. Միայն քուխատաքչիդ համար ասում են թէ, իբր թէ նա ասած լինի ձեզ բառին խոսօյօ գովօռիթի փարանցուզիթ». Ահա քեզ յայտնի ապացոյց, որ քու մէջ չի կայ գիտութիւն, որով կարող լինէիր մեր Հ. դպրոցին օգուտ տալու։ Ես նշմարիա որ՝ երբ և որտեղ ցուցիր դու գիտութիւդ։ Մի քանի ամիսներ-ցիկլս թարգմանութիւններդ, թէ ոչ ստացական գիտութիւն է երեսում և ոչ բնական խելք.

Շիտակութիւն է քու կողմանէ՝ գիտութիւն չունենալ, գիտուն ձևանալ և գիտունի պաշտօն վարել։ Հոգի ունիս Աստուծոյ տալու։

Փ. Վարդանեան՝ եթէ դու չիտակ մարդ ես, ինչու հրապարակական հարցաքննութիւնների ժամանակ հանդիսական հրատարակ ես գնալանանեներին, մասնաճառներին, ճարպ հարցնողներին, տղգէտ տիրացուներին, կիսատգէտ տէրտէրներին և...քու բարեկամներին, և ոչ մի փոքրիշատ ուսումնական մարդու։ Մինչէ տգէտ մարդը կարող է գնահատել թէ աշակերտի գիտցածը և թէ վարժապետի սովորեցուցածը, և մինչ այդպիսի մարդոց զովասանքը և նոր-ակալութիւնը ամենը մարդ կարող է ընդունել դափնեայ պսակի տեղ, որն դու անում ես և որն դու պարծանքով հրատարակում ես լրագրների մէջ։

Եթէ Փ. Վարդանեանը կոմերի և ոչխարների վրա լինէր կարգած, իմ ինչ փոյթս էր՝ լաւ է կատարում պաշտօնը, թէ վատ (թէև Անգլիայումն անասուններին ես լաւ խնամում են), բայց որովհետև նա ամէն կերպ խորամանկութիւն գործ դնելով, ձեռք առնց տնօրէնութիւնը հայոց երեխաներին և որովհետև նոցա ապագայ վիճակը հաւատացած է նրա անփորձ ձեռքին, կարմ խելքին ու կասկածելի խղճմտանքին, կարող էի ես անտարբեր և սառնարիւն մնալ։

Փ. Վարդանեանը, ինչպես որ վայել էր մի ազգասէր երիտասարդի, վաղօրոք ամրացուց իւր բանը, գրաւեց տեղական տղաների հնարքը և հովանաւորութիւնը, բայց թէ գորա համար ինչ «ֆիշնաթ» գործ դրաւ, խելք ունեցողը թող հասկանայ։

Եվ, Փ. Վարդանեան, վարժարանէն, վասն զի դու հայ տղայոց բարոյական ուղղութիւն տալ չես կարող, ժողովուրդը վրդովեցուցի, վասն զի քեզ լի յարգում և առանձնայ վայելց համարել է։ Մինէ ականջիդ չի հասնում ժողովրդի անդադրում աղաղակը թէ «Շինար առաջնանէն պէտէր է, սէքթէ մեր տղաքը վարպետի սեր ունէին, կարդալները ազէկ էր, և այլն. քու դասախարսկած տղայքը որը թողից (չուանէ) փախած լրբեներեր են, քու կրթած աշակերտները տգէտներ են, և այն քու յիշած թէչէնեանը նախ որ՝ ուրիշ վարժապետների աշակերտ էր, երկրորդ՝ տասը տարի պրոս է և երրորդ՝ մի ծիծեռնիկը գարուն չի բերի։ Ուրիշի երեխայքը քեզ ու քու ազգականներդ ընծայելը, այդ քու հնարն սովորութիւնն է, որ արդէն սէջդ բնութիւն է դարձեր։ Ցոյս առ Աստուած, չուտով դու Նախիջևանի 7 եկեղեցիների չինութիւնն էլ քեզ կընծայես։ Փեղմէն ամէն բան սպասել կարելի է.

Եվ Փ. Վարդանեան, վարժասուն է, և վարժասուրը ազատ քու ձախազան (օղուանքը) ներկայութիւնէն, ապա թէ ոչ՝ Նախիջևանցին սարսռած կը լինի զուրս գալ Լիմիանայ հովանաւորութեան տակէն (նա քաղաքական միջնակարգ վարժասուն կը հիմնէ) և դու կը լինիս պատճառը մի անհալին երկպառակութեան։ Խղճացիր մեր տղոց վրայ, որոնք տարրական ուսումն ստանալու համար (այլ ես դու կանոնաւոր տալ չես կարող) սոսկալուած են, տաժանական տանջանք կրելով, օրէնք և նիցս երթալ ու գալ Ռոստովի վարժասուններն, որք առասալուը երկաթ վերսի հեռու են մեզանից։ Ես գիտեմ, դու բանդ վաղուց ամրացրել ես. ես գիտեմ, քու կապերդ ամուր են. ես գիտեմ, դու աչքաքաց մարդ ես. բայց, ասող, այդ ամէնը պատիւ բերում է քու խորամանկութեանը, բայց ոչ ուղղութեանդ։ Մի ամբողջ քաղաքի վիճակ չէ կարող զոհ երթալու մի հաղիկ մարդու փոր կշտանալուն։ Այդ անբնական է։

Ահա երկու տարի է որ՝ ամբողջ քաղաքը բարձրաձայն աղաղակում է. «վարժասուրը վատ է, աչակերտները նորա մէջ բան չեն սովորում, մէջը կարգ ու կանոն չի կայ, ուսումը տիրոջը չէ ճանչնում, և այլն. այս ասողները ոչ միայն դրսի մարդիկն են, այլ և աչակերտների ծնողքը և մինչև անգամ նոյն իսկ վարժապետները. իսկ Փ. Վարդանեանը ասում է և չատերին էլ հաւատացնում, որ վարժատան մէջ ամէն բան ջաղ սկլամէթ է»։ Ի հարկէ, եթէ նորա խօսքերը Լիմանում ես հաղած եղի կամ նագդ ստակի տեղ ընդունվի, այն ժամանակ, ոչինչ վերանորոգութիւն և բարեկարգութիւն տեղի ունենալու չէ դպրոցի մէջ։

Փ. Վարդանեան, դու ասում ես թէ՝ այսուհետև քու խօսքը Միլիվիի հետ վերջինն է, իսկ ես քեզ ասում եմ որ՝ հէնց այս օրէն է, որ Միլիվիը պիտի սկսէ Փ. Վարդանեանի բուրդը քամին տալու ու նորա ամէն մի քայլափոխին խարելու ու խարազանելու, ոչ նորա համար որ՝ Փ. Վարդանեանը լաւ կամ վատ մարդ է, այլ նորա համար, որ նա իւր կոչմանը անընդունակ և անյարմար է և այդ ծանրակշիռ պաշտօնը «ճանկել է» ոչ արժանաւորութեամբ, այլ «ֆիշտերով»

Փ. Վարդանեան, գիտես քու գալշդ Նախիջևանը ինչ օգուտ ունեցաւ։ Նորա միակ օգուտը այն է, որ դու մեր երիտասարդներին սովորեցուցիր ձիի նման, ուտելդ գեանին տրոփելով, ГАЛОПъ պարելու։ Թող վկայ բոլոր Նախիջևանն, որ ասածս սուտ է։ Ասել եմ և պիտի ասեմ, որ ոչ դու և ոչ ձեռքիդ տակ գտնուած վարժասուրը ոչ մի գոչի օգուտ տուած չէք քաղաքին և տալ ևս չէք կարող։

Քաղաքիս մէջ ձայն տարածուել է, իբր թէ Փ. Վարդանեանի ջարեկամներ խոսացել են նորան ապաստան տալու բացուելու կոկոյեան օրիորդաց վարժարանի մէջ։ Ա յ դ է ր պ ա կ ա ս, որ նա, վնասելով մեր տղայոց ապագայ վիճակը, այսուհետև ձեռնամուխ լինէր վնասելու նաև մեր խեղճ աղջիկներին։

Վերջապես ես խոսքս դարձնում եմ Փ. Վարդանեանի բարեկամներին։ Պարոններ, այդ ինչ սովորութիւն է, հէնց որ ձեր մէջէն մինը անպիտան, անօգուտ, անընդունակ, անգործ, ծոյլ դուրս եկաւ, դուք իսկոյն ախտաւոր է ք նորան քաղաքի գլուխն վարձելու, քաղաքի վրան ծանրութիւն դարձնելու, քաղաքի արիւնով ու քրտնքով կերակրելու. էլ պաշտօն մնաց, որ ձեր մէջի մարդոց չի բաժանէք, էլ մի օգտաւէտ ապրիւր մնաց, որ դուք ձեր անդամակիցներից մինի փորը չի խրեք։ Քաղաքապետն՝ ձեր մէջէն է ք ընտրում. պատգամաւոր (депутатъ) ձեր մէջի մարդոցմէն է ք ուղարկում 1000—1500 մանէթ վարձով, գանձապահ—ձեր մէջի մարդն է, երեցփոխ—ձեր մէջի մարդն է, արքունի թղթեր վարձառող—ձեր մէջի մարդն է, մասնաւոր ընկերութեան գանձապահ (ընդ նմին և գանձակալ) դարձեալ ձեր մէջի մարդն է. վերջապէս, դուք հնար գտնում է ք, օրով-ցերեկով քաղաքական բանէն, ի վնաս ժողովրդին և յօգուտ ձեր մէջի մարդուն, արդէն ոչ մի, կամ երկու, կամ երեք, այլ քանի քանի տասնեակ հաղարներ ուտեցնելու։

Այժմ հասկացար, կարդացող, թէ Միլիվիի որդիսի յօգուտները և որդիսի անձինք առնում են ձեռքերը ու դէն են ձգում։ Լուն ու մլուկն (խամաղա) էլ լուաղեղի (персидский порошокъ) հոտը չեն սիրում. այդ չէ նշանակում, որ լուաղեղը անօգուտ բան է։

Դարձեալ՝ թող ասէ մի մարդ, որ Միլիվիը իւր որդիսի և իցէ յօգուտները և որդիսի անձինք առնում են ձեռքերը ու դէն են ձգում։ Լուն ու մլուկն (խամաղա) էլ լուաղեղի (персидский порошокъ) հոտը չեն սիրում. այդ չէ նշանակում, որ լուաղեղը անօգուտ բան է։

Դարձեալ՝ թող ասէ մի մարդ, որ Միլիվիը իւր որդիսի և իցէ յօգուտները, խմբագրութիւն ուղարկելու առաջ, հարիւրաւոր մարդոց առջև կարդացած չէ և նոցա միասնյն հաւանութիւնը ստացած չէ թէ՝ ինչ որ գրած է նորա մէջ՝ բոլորը ճշմարիտ է բոլորը ժողովրդի իսկական կարիքն է *)։

Միլիվի

*) Ցոյց ենք տալիս այս նամակը և այսուհետև գիտաւորութիւն չունենք տեղ տալ «Մշակի» էջերի մէջ Նոր-Նախիջևանի ներքին կռիվներին, որոնք չեն կարող հետաքրքրել «Մշակի» ընթերցողներին, սառնասրտ։ Խմբ.

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱԼԻՑ

—

19 մարտի

Կարդալով ձեր լրագրի էջերում վանի թշուառ սովատանջների համար տպված յորդորական յօդուածները, որոնք հրատարակում էին մեր ուշադրութիւնը մեր հայ եղբայրների և քոյրերի վրա, չէ կարողացայ համբերել առանց օգնելու նոցա և ես մանկահասակ լինելով, չը կարողացայ չրջել փոքրոյէ փոքրոց ժողովելու մի նշանաւոր գրամ, ուստի վճռեցի գնել իմ ձեռքս և նոքա տեսնելով իմ ջերմեռանդ արտասուքը և չը նայելով, որ նոքա այս մասին կրկին տուած էին փող, բայց յուզված սրտով նուիրեցին 11 բուբլի և ուղարկելով ձեզ այս չնչին գումարը, խնդրում ուղարկէք ուր հարկ է և խնդրեմ տպէք ձեր լրագրի մէջ նուիրատուների անունները։

Եփրեմ Սուքիասեան 3 բ., Տիկին Աննա Սուքիասեան 2 բ., Սուքիա Սուքիասեան 1 բ., Օրիորդ Վառվառա Սուքիասեան 1 բ., Օրիորդ Շուշանիկ Սուքիասեան 1 բ., Օրիորդ Սոֆիա Սուքիասեան 1 բ., Տիկին Մարգարիտա Տէր-Միքայէլեան 1 բ., Տիգրան Տէր-Միքայէլեան 1 բ.։

Աչակերտուհի Եղիսաբէթեան ուսումնարանի Սօֆիա Սուքիասեան

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱԼԻՑ

—

25 մարտի

Հայաստանի սովատանջ մեր եղբարց աղաղակը չը թողից մեզ հանգիստ, ուստի հարկադրվեցայ հանդգնակութիւն բանալ իմ սեփական կրպակի մէջ, տրատրելով իմ ընկերներին ևս օգնել ձեռնարկութեանս։ Հաւաքեցի 64 բուբլ և անա ուղարկում եմ այդ փողը նուիրատուների ցուցակի հետ միասին։

Գրիգոր Մ. Լազարեանց 5 բ., Յարութիւն Բ. Ղազարեան 3 բ., Կարապետ Պոյաջեան 2 բ., Օվանէս Մ. Նալպանտեան 1 բ., Պողոս Պետրոսեան 1 բ., Կարապետ Ագիխանեան 2 բ., Յակոբ Տէր-Մարգարեան 1 բ., Մկրտիչ Հարութեան 3 բ., Խաչատուր Դեօչոեան 1 բ., Գրիգոր Նիկողոսեան 1 բ., Ղուկաս Սամուէլեան 1 բ., Սարգիս Ինչանեան 1 բ., Աւետիս Նահապետեան 3 բ., Գրիգոր Զիմեան 1 բ., Ադէքսանդր Պապազեանց 1 բ., Յարութիւն Ասլանեան 1 բ., Յովանէս Բարազամեան 1 բ., Ռուբէն Բազրատունեան 1 բ., Վարդան Պամբուկեան 1 բ., տիկին Հռիփսիմէ Պուտուրեան 1 բ., տիկին Մարիամ Պետրոսեան 1 բ., Տիգրան Վարդանեան 3 բ., Գէորգ Պուտուրեան 3 բ., Ադէքսանդր Մ. Մելրունեան 2 բ., Սերասատցի Նուռագիշերը 2 բ., Յարութիւն Յակոբեան 1 բ., Խաչատուր Բոսպեան 2 բ., Ստեփանոս Տէր-Մարգարեան 1 բ., Գէորգ Սարգիսեան պապազեանցի 5 բ., Աւաքել Պապոյեան 3 բ., Աւաքել Մանուկեան 1 բ., Խնկիանոս Չգիլքեան 1 բ., Մ. Գէորգ Մ. Վարդանեան 1 բ., Ադէքսանդր Ղազիեան 1 բ., Զաքար Սարայտարեան 1 բ., Կարապետ Մ. Պողոսատրեան 1 բ., Մանուկ Մարտիրոսեան 1 բ., Յարութիւն Թանպաղեան 1 բ., Գրիգոր Պապոյեան 1 բ.։ Ստորագրութիւնը չարունակվում է։

Ժամագործ Գրիգոր Լազարեան

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, ապրիլի 2

Երբ մեծ. պ. Սաղաթելեանը բարեհաճեց յանձն առնել մի ազատութիւն, որով նա պիտի օրինակ լինի կոկոյեան մեծ-ազգասէր հայ երիտասարդութեան, բարոյապէս պարտաւորելով նորան գրել միւս նշանաւոր ժամանակից հայրենակիցների կեանքը, ինչպես այդ անում է այժմ պ. Սաղաթելեանը բազմահչակ կոմս Լօրիս-Մելիքովի վերաբերութեամբ, թող յարգելի կենսագիրը չը զլանայ ընդունել իմ մի նկատողութիւնը իմ անկեղծ յարգանքի հետ։ Որովհետև մեր մեծանուն հայրենակիցը նոր-նոր փայլեց իւր քաջալանական սխրագործութիւններով, որչափ և ուրիշ բարձր հերքերով, վասն որոյ յարգելի կենսագիրը թող այդ գեղեցիկ երեսոյթի պատճառը որոնէ ոչ թիֆլիսի օտարազգեաց արեան մէջ, այլ Լօրեայ գաւառի պատմական որդոց երակներում, կոկոյեան հայերի պատմութեան մէջ։ Լօրեայ գաւառը մի պայծառ բացառութիւն է եղել աւանդական Արցախի հետ, որտեղ հայը մինչև վերջի ժամանակները քաջութիւնը և ազգային ինքնաճանաչութիւնը առաջին առաքինութիւն է համարել, պատասպարելով խաների դէմ անմասնչելի սարերի վրա։

Ռուսաց յաղթական զորքերը կոկոյեանում նոր հաստատվելու ժամանակ, Ղարաբաղի և Լօրեայ մելիքները գեռ ևս գտնվում էին կիսանկախ դրութեան մէջ և նոքա անչուչտ բոլորն էլ իշխանների տիտղոս կը կրէին այսօր, եթէ Յիցիանով անմնամական հակակրութիւն չունենար դէպի հայերը։ Բայց ճանաչվելով մեր տէրութիւնից լոկ ազնուականներ Լօրեայ ինչպես և Ղարաբաղի մելիքները, պահեցին միայն ազնիւ արեան այն վեհ յատկութիւնները, որոնք արտայայտվում են այսօր նոցա հարազատ որդու—կոմս Լօրիս-Մելիքովի անձնաւորութեան մէջ։ Վասն որոյ պարտաւորութիւն եմ համարում խնդրել կոմսի կենսագրից, որ նա գտնէ մի թեթև պատճառ՝ ձգէ Լօրեայ մելիքների վրա, որոնցից ամենանուշակածը, մեր մեծանուն հայրենակիցը նորա առանձին ուխտաւորութեան նիրճէ է այսօր։

Դր. Նիկողոսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Այսօր հրատարակում ենք «Մշակի» համարը, բայց այսօր Գրիգոր Լուսաւորչի տօնի պատճառով և երկուշաբթի, ապրիլի 7-ին, Աւետման տօնի պատճառով տպարանում չեն քանում. Այդ պատճառով «Մշակի» հետևեալ № 59 երեքշաբթի օր չի հրատարակվի, այլ կը հրատարակվի չորեքշաբթի օր, ապրիլի 9-ին։

—

ԵՐԵՒԱՆԻՑ պ. Թոմաս Մեհերեանցից ստացանք 200 բուբլ յօգուտ վանի սովատանջների, որ հաւաքվեցաւ նուիրատուութեամբ յիշեալ քաղաքում փողը մեզ հասցրած է հղել Թիֆլիսում պ. Յակոբ Մեհերեանցի ձեռքով։ Ստացանք և նուիրատուների ցուցակը։

—

Մեզ գրում են ԴԻԼԻՋԱՆԻՑ հետևեալը։ «Գաւառները սկսում են հետեւել Թիֆլիսի օրինակին։ Այս օրերումս Մեծ-Ղարաբաղի վանական Ա. Մելիքեանց, որ առաջուր էր անում Դիլիջանում, վաղուց գրաւած ունէր ժողովրդի հաւատարմութիւնը և վերջին տարիներումս մեծ գումարներ պտրոք էր վերցրել։—յանկարծ այս օրերումս իրան մնանկ է յայտնում նրա պարտքը այդ օրը հաշւում էին միայն 7000 բուբլ։ Երբ պարտատէրերը ցանկացան պահանջել իրանց դրամները, պարոնը հասկանալով որ իր բոլոր կարողութիւնը պէտք է ձեռքից գնայ, ժողովում է իր բոլոր չորեքը իր բարեկամներին և իրաքանչիւրին տալիս է մուրհակներ տնային կերպով, մէկին 2000 բուբլու, միւսին 1500 բ. և այն, և ուղարկում է հաշտարար դատարանը։ Խնդիրները տալուն պէս ինքն էլ ներկայանում է առանց ծանուցագիր ըստանալու։ Ա՛ա այժմ հասցրել է պարտք 17,000 բ. գումարի։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Հեռագիրը հաղորդից, որ պապ Լեոն XIII-ը բողոք ներկայացրեց Ֆրանսիական կառավարութեանը մարտի 17-ին Ֆրանսիական կառավարութենից հրատարակված հրամանի դէմ։

Այդ հրամանը հանրապետութեան նախագահին ուղղված յայտարարութեան ձև ունի և նրա բովանդակութիւնը մօտաւորապէս հետևեալն է։

«Մեր հասարակական իրաւունքի հիմնական սկզբունքները չեն համերում, որ Ֆրանսիայում առանց կառավարութեան թոյլատրութեան հիմնվեն կանոնց կամ տպաւորագիրներց միաբանութիւններ։

«Զը նայելով օրէնքի այսպիսի պարզութեանը, Ֆրանսիայում կազմվեցան թէ կանոնց և թէ տպաւորագիրներց բազմաթիւ միաբանութիւններ։ Նոքա բազմացան մանաւանդ կայսրութեան ժամանակ և 1870 թուականի անցքերից յետոյ։ 1879 թուին Ֆրանսիա